



ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱՆ  
Գ. ԲԱԲԱՅԱՆ



**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**մրցույթի անցկացման մասին**

**Մրցույթ N 1882-Ա**

ԵՐԵՎԱՆ 2022

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N1882-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 820-Ն որոշումներով, ինչպես նաև հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի N350-Ա հրամանը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեն հրավիրում է բոլոր սուբյեկտներին՝ մասնակցելու «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:

**1. Ընդհանուր տեղեկություններ մասնավորեցվող գույքի մասին**

Հավելված N 1

Գույքի անվանումը	Գույքի հասցեն	Բաժնետոմսերի քանակ /հատ/	Բաժնետոմսերի անվանական արժեքը /դրամ/	Բաժնետոմսերի գնահատված արժեքը /հազար դրամ/	Վաճառքի նվազագույն գինը /հազար դրամ/	Գույքի արժեքի որոշման հետ կապված գումարը /հազար դրամ՝ ներառյալ ԱԱՀ/	Մրցույթի նախավճարի չափը /հազար դրամ/
2	3	4	5	6	7	9	11
«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր Ընկերության ակտիվները գնահատված են 5,110,296.120 հազար դրամ: Շենք-շինության մակերեսը՝ 15607.17 ք.մ. է, հողատարածքի մակերեսը՝ 1.7863 հա:	Քաղ. Երևան, Օրբելի 41	13 229	3 290	5,023,162.620	3,265,056.0	1,200.0	<b>163,252.8</b>

Հետագայում հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման, իրավաբանական անձի բաժնետոմսի դիմաց բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) սեփականատիրոջը հանձնման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին հանձնման դեպքում, ձեռք բերողը

համապատասխան համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի՝ վճարման պահին գործող կադաստրային արժեքը: Այս պահին անշարժ գույքի զբաղեցրած հողատարածքի 1ք/մ կադաստրային արժեքը կազմում է 139,425.0 դրամ: Հողամասը ծանրաբեռնված է սերվիտուտով (հարակից բնակելի շինություններ):

Ընկերության շենք-շինություններն ենթարկվել են սեյսմիկ հետազոտության՝ գլխավոր մասնաշենքի տեխնիկական վիճակը և սեյսմիկ խոցելիությունը գնահատվել է 3-րդ աստիճան:

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի պարտավորությունները փոփոխական են, կրում են շարունակական բնույթ և դրանք իրավահաջորդությամբ անցնում են բաժնետոմսերի նոր սեփականատիրոջը (սեփականատերերին):

Համաձայն ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 8-ի թիվ 1882-Ս որոշման Ընկերության գնահատված պարտավորությունները 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ (հաշվետու ժամանակահատված) կազմել են 87,133.5 հազ. դրամ, այդ թվում՝

- կրեդիտորական պարտքեր գնումների գծով՝ 8,827.8 հազ. դրամ.
- ստացված ընթացիկ կանխավճար՝ 1,050.5 հազ. դրամ.
- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին՝ 29,017.1 հազ. դրամ.
- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատողների այլ կարճաժամկետ հատուցումների գծով՝ 17,290.5 հազ. դրամ.
- պարտադիր սոցիալական ապահովագրության գծով՝ 390.0 հազ. դրամ.
- այլ կրեդիտորական պարտավորություններ՝ 7,770.0 հազ. դրամ.
- ընթացիկ պահուստներ՝ 22,248.6 հազ. դրամ.
- այլ ընթացիկ պարտավորություններ՝ 539.0 հազ. դրամ:

Ընկերության պարտավորությունները 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում են 67,421.1 հազ. դրամ, այդ թվում՝

- կրեդիտորական պարտավորություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ՝ 21,143.0 հազ. դրամ.
- կրեդիտորական պարտավորություն գործընկերների գծով՝ 11,587.8 հազ. դրամ.
- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և սոց. ապահովագրության վճարների գծով՝ 26,920.3 հազ. դրամ.
- այլ կրեդիտորական պարտավորություններ՝ 7,770.0 հազ. դրամ:

## ***2. Մրցույթին մասնակցելու պայմաններ***

2.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես՝ Հավելված N 1-ը և 6.1 կետը) և 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (օրինակելի ձևը՝ հավելված N 2), որը ներառում է հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ,
- իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի (պետական ռեգիստրի վկայական, կանոնադրություն) պատճենները, քաղաքացիների համար՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի բնօրինակը/ները/ կամ պատճենը/ները/,
- իրավաբանական անձանց համար նաև գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձևով և պայմաններով գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ ներքին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնություն չի պահանջվում, կամ, որ պահանջվող համաձայնություններն ստացված են (կցելով այդ համաձայնագրերը),
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- ներդրումային (գործարար) ծրագիր (օրինակելի ձևը՝ հավելված N 4), որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկությունները՝ գույքի օգտագործման նպատակը և ակնկալվող արդյունքները, ուղղվածությունը, ներդրումների չափը ըստ տարիների, ընդ որում՝ նշելով յուրաքանչյուր տարվա համար ներդրումների նվազագույն չափը:

2.2 Մրցույթին չեն կարող մասնակցել սակարկությունների կազմակերպիչը, իրավաբանական անձ համարվող կազմակերպիչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպիչի աշխատակիցները, մրցութային հանձնաժողովի անդամները, նրանց ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք:

### ***3. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը***

3.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են Պետական գույքի կառավարման կոմիտե՝ մինչև 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 2.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են սուսնձված և ստորագրված ծրարով՝ անձամբ, փոստով՝ պատվիրված նամակով: Ծրարը հասցեագրվում է մրցութային հանձնաժողովին՝ նշելով մրցույթի համարը (N1882-Ս) մրցույթի մասնակցի տվյալները (անվանում /անուն, ազգանուն/, հասցե,

հեռախոսահամար): Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Պետական գույքի կառավարման կոմիտե մուտքի օրը:

3.2. Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում և առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

3.3. Մրցույթի հայտատուները՝ մինչև մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

3.4. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձևով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը ուղեկցվում են թարգմանություններով:

3.5. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

3.6. Մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը չպետք է փոքր լինի ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 8-ի թիվ 1882-Ա որոշմամբ սահմանված վաճառքի նվազագույն գնից՝ 3,265,056.0 հազ դրամից:

3.7. Մրցույթն անցկացնում է Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի N350-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը: Մրցութային հանձնաժողովը բացում և գնահատում է մրցույթի հայտերը, ինչպես նաև որոշում մրցույթի հաղթողին:

#### ***4. Մրցույթի հաղթողի ճանաչման կարգը***

4.1. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն հայտատուն, որն առաջարկել է առավելագույն բարձր գին: Հավասար գնային առաջարկի (գնային առաջարկի օրինակելի ձևը՝ հավելված N 3) դեպքում նախապատվությունը տրվում է ներկայացված ներդրումային ծրագրով առաջին 5 տարիների (առաջին տարին համարվում է 2023 թվականը) ներդրումների հանրագումարի առավելագույն չափ ներկայացրած հայտատուին:

Այն հայտատուներին, որոնց հայտերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված պայմաններին, մրցութային հանձնաժողովի կողմից տրվում է մրցույթի մասնակցի կարգավիճակ:

Այն հայտերը, որոնք չեն համապատասխանում մրցույթի համար սահմանված պայմաններին, հանձնաժողովի կողմից չեն քննարկվում:

Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար՝ 163,252.8 հազար ՀՀ դրամ գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու և (կամ) պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում և մրցույթը համարվում է չկայացած, իսկ նախավճարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջե:

4.2. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները, ինչպես նաև մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուների կողմից վճարված մրցույթի մասնակցության նախավճարը կազմակերպչի կողմից մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին վերադարձվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ մասնակիցների կողմից ներկայացված հաշվեհամարին:

4.3. Մրցույթի հաղթողին որոշելու համար սակարկվող պայման է հանդիսանում գույքի համար առաջարկվող գինը (այն չի կարող ցածր լինել մրցույթի ժամանակ բաժնետոմսերի վաճառքի համար սահմանված նվազագույն գնից):

4.4. Մրցույթի մասնակիցները կարող են ներկա գտնվել հայտերի բացման նիստին:

## ***5. Վճարումներ և պայմանագրի կնքում***

5.1. Մրցույթի հաղթողը հինգօրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների արձանագրության հաստատված օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղթողը՝ իր կողմից առաջարկված գինը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստորագրվելուց հետո 1 ամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գույքի վաճառքի գումարի 70 տոկոսն ուղղելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, 30 տոկոսը՝ համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

5.3. Գնորդը պետք է վճարի նաև մասնավորեցվող գույքի արժեքի որոշման հետ կապված գումարը (1,200.0 հազ. դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ համաձայն հավելված N1-ի:

5.4. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահը՝ մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի, ինչպես նաև բաժնետոմսերի արժեքի որոշման համար նախատեսված 1,200.0 հազ. դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքում է մասնավորեցման մասին պայմանագիր դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է՝

ա. իր միջոցների հաշվին վճարել պայմանագրի կնքման, ինչպես նաև ընկերության արժեթղթերի (բաժնետոմսերի) ռեեստրի վարման և պահառության դիմաց վճարումները,

բ. մեկամսյա ժամկետում բաժնետոմսերի սեփականատերերի փոփոխության վերաբերյալ համապատասխան գրանցում կատարել բաժնետոմսերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպությունում:

գ. պայմանագրի կնքումից հետո վեց ամիս պահպանել ընկերության փաստացի աշխատողների թիվը և աշխատավարձի չափը:

դ. ներկայացնել ներդրումային ծրագիր, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մաս:

5.5. Մասնավորեցումը չի կարող հանգեցնել ընկերության գործունեության հիմնական ուղղության կամ հանրային նշանակության փոփոխությանը, իսկ գնորդը պարտավորվում է պահպանել ընկերության գործունեության հիմնական ուղղությունը: Պայմանի չկատարման, ինչպես նաև գնորդի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման դեպքում մասնավորեցման պայմանագիրը ենթակա է լուծման, իսկ գույքը՝ Հայաստանի Հանրապետությանը վերադարձման:

## 6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը (հազ. դրամ)	<b>163,252.8</b>
6.2	Մրցույթի նախավճարի մուտքագրման հատուկ հաշիվը	Թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
6.3	Մրցույթային առաջարկի ներկայացման վերջնաժամկետը	2023 թվականի հունվարի 31-ը, ժամը՝ 17:00
6.4	Մրցույթային հայտի ներկայացման վայրը	ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Պետական գույքի կառավարման կոմիտե, Փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժին, 423 սենյակ
6.5	Մրցույթի մասնակցության հայտերի բացման, ամփոփման նիստի և մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը	2023 թվականի փետրվարի 3-ը, ժամը՝ 11:00 ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Պետական գույքի կառավարման կոմիտե,
6.6	Մրցույթի կարգին ծանոթանալը	ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 27-ի N 820-Ն որոշում
6.7	Էլեկտրոնային կապ	<a href="mailto:info@spm.am">info@spm.am</a>

## 7. Լրացուցիչ տեղեկություններ

*Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Պետական գույքի կառավարման կոմիտե, ' 011-52-65-57, 011-52-76-35 հեռախոսահամարներով:*

***Պետական գույքի կառավարման կոմիտե***



